

Այս դասի (մտփվացնող ներածական տեսանյութ+ դասի տեքստ+ բառարան+ինքնաստուգիչ հարցեր) յուրացման համար հարկավոր է մինչև 4 ժամ:

ԴԱՍ 9

ԱՆՋԱՓՀԱՍ ՏՈՒԺՈՂՆԵՐԻ ԵՎ ՎԿԱՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՄԲ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՎ

Ցուցումներ

ՄՈՏԻՎԱՑՆՈՂ ՆԵՐԱԾԱԿԱՆ ՏԵՍԱՆՅՈՒԹ
(Հասանելի է Արդարադատության ակադեմիայի կայքի հեռուստուցման բաժնում և հեռուստուցման փաթեթի կրիչում)



Մինչև 5 րոպե

Անչափահասների գործերով վարույթի թե՛ նախնական քննության և թե՛ դատական քննության կարգը կարգավորվում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ ՔԴՕ) [1] ընդհանուր կանոններով, ինչպես նաև ՔԴՕ 50-րդ գլխի 439-443-րդ հոդվածներով: Միևնույն ժամանակ, ՔԴՕ 98-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ քրեական դատավարությանը մասնակցող յուրաքանչյուր անձ, ով կարող է հաղորդել տվյալներ, որոնք նշանակություն ունեն հանցագործությունը բացահայտելու և դրա կատարողին հայտնաբերելու համար, ինչի հետևանքով կարող են վտանգվել նրա, նրա ընտանիքի անդամի, մերձավոր ազգականի կամ մերձավորի կյանքը, առողջությունը, գույքը, իրավունքներն ու օրինական շահերը, ունի պաշտպանության իրավունք:

Ուշադրությամբ կարդացե՛ք տեքստը (օգտվելով բառարանից) և այն յուրացնելուց հետո միայն անցե՛ք հաջորդ մասերին /ինքնաստուգիչ հարցեր, առաջադրանք/:



Մինչև 180 րոպե

Ներպետական քրեադատավարական օրենսդրությունն անչափահաս տուժողների և վկաների՝ որպես քրեական դատավարությանը մասնակցող հատուկ սուբյեկտների համար, առանց այդ մասին կոնկրետ շեշտադրում կատարելու, սահմանել է որոշակի իրավական առանձնահատկություններ, որոնք տարբերակում են դնում այս ոլորտը կարգավորող իրավական նորմերի միջև: Մասնավորապես, ՔԴՕ 59-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է, որ «Անչափահաս կամ անգործունակ տուժողի իրավունքները սույն օրենսգրքով սահմանված կարգով նրա փոխարեն իրականացնում է նրա օրինական ներկայացուցիչը», 153-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է, որ «Չի թույլատրվում բերման ենթարկել մինչև 14 տարեկան անչափահասներին, ...բացառությամբ ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության կատարման մեջ կասկածվելու դեպքերի», 205-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է, որ «Արգելանքի տակ չգտնվող անչափահասները, որպես կանոն, կանչվում են իրենց օրինական ներկայացուցիչների միջոցով», 205.1-րդ հոդվածը սահմանում է, որ «Հարցաքննությունը չի կարող տևել անընդմեջ չորս ժամից, իսկ անչափահասի... հարցաքննությունը՝ երկու ժամից ավելի: ...Օրվա մեջ հարցաքննության ընդհանուր տևողությունը չի կարող գերազանցել ութ, իսկ անչափահասի... համար՝ վեց ժամը: ...Բժշկի եզրակացության հիման վրա քննիչը կարող է սահմանել սույն հոդվածով նախատեսված հարցաքննության ժամկետներից ավելի կարճ ժամկետներ», 207-րդ հոդվածը սահմանում է, որ «Անչափահաս վկան կամ անչափահաս տուժողը, անկախ տարիքից, կարող է հարցաքննվել՝ պայմանով, որ նա կարող է հաղորդել գործի համար նշանակություն ունեցող տեղեկություններ: ...Մինչև տասնվեց տարեկան վկայի կամ տուժողի հարցաքննությունը կատարվում է մանկավարժի մասնակցությամբ: Անչափահաս վկայի կամ

անչափահաս տուժողի հարցաքննությանը ներկա գտնվելու իրավունք ունի նրա օրինական ներկայացուցիչը: ... Հարցաքննությունը սկսելուց առաջ օրինական ներկայացուցչին բացատրվում են հարցաքննությանը ներկա գտնվելու, քննիչի թույլտվությամբ իր դիտողությունները շարադրելու և հարցեր տալու իր իրավունքները, ինչպես նաև պարտականությունները: Քննիչն իրավունք ունի չընդունելու տրված հարցերը, սակայն դրանք պետք է ներառվեն արձանագրությունում: ...Տասնվեց տարին չլրացած վկային կամ տուժողին բացատրվում է գործին վերաբերող ամեն ինչի մասին ճշմարտացիորեն պատմելու նրա պարտականությունը, բայց նա չի նախազգուշացվում ցուցմունքներ տալուց հրաժարվելու կամ խուսափելու կամ ակնհայտ սուտ ցուցմունքներ տալու համար օրենքով սահմանված պատասխանատվության մասին», 341-րդ հոդվածը սահմանում է, որ «Անչափահաս վկայի հարցաքննությունը, եթե դա անհրաժեշտ է գործի հանգամանքների լրիվ, բազմակողմանի և օբյեկտիվ հետազոտման համար, կողմերի միջնորդությամբ կամ դատարանի նախաձեռնությամբ կարող է կատարվել ամբաստանյալի բացակայությամբ: Դատական նիստի դահլիճ վերադառնալուց հետո ամբաստանյալի համար հրապարակվում են անչափահաս վկայի ցուցմունքները, նրան հնարավորություն է ընձեռվում տվյալ վկային տալ հարցեր և ցուցմունքներ՝ վկայի հաղորդած տվյալների վերաբերյալ: ... Տասնվեց տարին չլրացած վկան պետք է հեռացվի դատական նիստի դահլիճից նրա հարցաքննությունն ավարտվելուց հետո, բացի այն դեպքերից, երբ դատարանը՝ կողմի միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ, անհրաժեշտ է համարում այդ վկայի հետագա ներկայությունը»:

Այսպիսով, ներպետական օրենսդրությունը անչափահասների մասնակցությամբ վարույթներում նրանց

վերաբերյալ կարգավորումներում որոշակի առանձնահատկություններ սահմանել է, սակայն անչափահաս տուժողների կամ հանցագործության անչափահաս վկաների պաշտպանության վերաբերյալ կոնկրետ դրույթ առկա չէ ՀՀ ՔԴՕ 98.1-րդ հոդվածով սահմանված պաշտպանության միջոցներում: Մասնավորապես, պաշտպանության միջոցներն են՝ 1) անձին պաշտոնապես նախազգուշացնելը, ումից սպասվում է պաշտպանվող անձի նկատմամբ բռնության վտանգ կամ այլ հանցանքի կատարում, 2) պաշտպանվող անձի ինքնությունը հաստատող տվյալները պաշտպանելը, 3) պաշտպանվող անձի անձնական անվտանգությունն ապահովելը, բնակարանը և այլ գույքը պահպանելը, 4) պաշտպանվող անձին անհատական պաշտպանության միջոցներ տրամադրելը և վտանգի մասին հայտնելը, 5) վերահսկողության տեխնիկական միջոցներ օգտագործելը և հեռախոսային ու այլ հաղորդումները գաղտնալսելը, 6) պաշտպանվող անձի՝ քրեական վարույթն իրականացնող մարմին ներկայանալու անվտանգությունն ապահովելը, 7) կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ այնպիսի խափանման միջոց ընտրելը, որը կբացառի նրանց կողմից պաշտպանվող անձի հանդեպ բռնության կամ այլ հանցանքի կատարման հնարավորությունը, 8) պաշտպանվող անձին բնակության այլ վայր փոխադրելը, 9) պաշտպանվող անձի ինքնությունը հաստատող փաստաթղթերը փոխարինելը կամ արտաքինը փոխելը, 10) պաշտպանվող անձի աշխատանքի, ծառայության կամ ուսման վայրը փոփոխելը, 11) դատական նիստերի դահլիճից առանձին անձանց հեռացնելը կամ դռնփակ դատական քննություն անցկացնելը, 12) դատարանում պաշտպանվող անձին հարցաքննելը՝ առանց նրա ինքնության մասին տեղեկությունների հրապարակման:

Սակայն պետք է նշել, որ հաշվի առնելով անչափահաս

տուժողների ու վկաների և՛ անձնային առանձնահատկությունները, և՛ կոնկրետ հանցագործության տեսակով պայմանավորված առանձնահատկությունները (օրինակ՝ սեռական հանցագործությունների, սեփականության դեմ ուղղված հանցագործությունների և այլ առումներով), ինչպես նաև ներքևում շարադրվող միջազգային իրավական փաստաթղթերում առկա մոտեցումները, վարույթն իրականացնող մարմինը կարող է և հաճախ նաև վերը նշվածի ուժով պարտավոր է ձեռնարկել համապատասխան միջոցներ անչափահաս տուժողի կամ վկայի պաշտպանությունն ապահովելու համար:

Ինչ վերաբերում է միջազգային իրավական փաստաթղթերում առկա կարգավորումներին, ՄԱԿ-ի Տնտեսական և Սոցիալական խորհրդի 2005 թ. ընդունված «Հանցագործությունից տուժած և հանցագործության վկա երեխաների գործերով արդարադատության ուղենիշները», որը բնորոշում է հանցագործությունից տուժած երեխաներին և վկաներին որպես «երեխաներ և 18 տարեկանից ցածր անձինք, ովքեր հանդիսանում են հանցագործությունից տուժած անձինք կամ հանցագործության վկա՝ անկախ հանցագործության մեջ նրանց դերակատարումից կամ ենթադրյալ հանցագործի կամ հանցագործների խմբի հետապնդումից»: Միաժամանակ, անհրաժեշտ է, որ վերջիններիս վերաբերվեն հոգատար և զգայուն ձևով, արժանապատվությամբ և կարեկցանքով ու տրամադրեն միջազգային չափանիշներին համապատասխան պաշտպանություն: Մասնավորապես, ՄԱԿ-ի վերը նշված ուղենիշների 7-րդ կետի համաձայն, «հանցագործությունից տուժած և վկա երեխաները կարող են ենթարկվել լրացուցիչ զրկանքների, եթե սխալմամբ դիտարկվեն որպես հանցագործներ՝ իրականում հանդիսանալով տուժածներ և վկաներ»: Այս ուղենիշների հիման վրա ՄԱԿ-ի թմրամիջոցների և հանցագործությունների գրասենյակի կողմից ՄԱԿ-ի

Մանկական հիմնադրամի և Երեխաների իրավունքների միջազգային բյուրոյի հետ համատեղ մշակվել և 2009 թվականին շրջանառության մեջ է դրվել «Հանցագործությունից տուժած և հանցագործության վկա երեխայի մասնակցությամբ արդարադատության վերաբերյալ» մոդելային օրենք [3], որն ըստ էության, իրավական պարտադիր ուժ չունի, սակայն հանդիսանում է առաջին համապարփակ իրավական աղբյուրն այն մասին, թե ինչ հիմնական սկզբունքների վրա պետք է հենվի անչափահասների, հատկապես հանցագործություններից տուժած կամ հանցագործություններին վկա հանդիսացած անձանց մասնակցությամբ վարույթները՝ ինչպես նախնական քննության, այնպես էլ դատական քննության փուլերում:

Մասնավորապես, ուշադրության են արժանի այն սկզբունքները (Հոդված 2), որոնք կազմում են անչափահաս տուժողների և վկաների մասնակցությամբ վարույթների հիմնաքարերը:

Այսպես՝ երեխայի լավագույն շահի հաշվի առնելը պետք է լինի վարույթն իրականացնող մարմնի առաջնային մտահոգության առարկան:

Այս մասին առավել մանրամասն տե՛ս Դաս 2-ում:

Անչափահասի նկատմամբ վերաբերմունքը պետք է հենված լինի խտրականության արգելքի սկզբունքի վրա, այսինքն՝ վերաբերվունք՝ անկախ երեխայի կամ նրա ծնողների կամ օրինական խնամակալների ռասայից, մաշկի գույնից, կրոնից, համոզմունքներից, տարիքից, ընտանեկան կարգավիճակից, մշակույթից, լեզվից, ծագումից, ազգային կամ սոցիալական ծագումից, քաղաքացիությունից, սեռից, սեռական կողմնորոշումից, քաղաքական կամ այլ հայացքներից, հաշմանդամության առկայությունից, գույքային

կամ այլ դրությունից: Անչափահասի նկատմամբ վերաբերմունքը պետք է լինի խիստ զգայուն և հոգատար, այն է՝ վերջինիս արժանապատվությունը հարգելով ամբողջ վարույթի ընթացքում, հաշվի առնելով նրա հետ առնչվող կոնկրետ իրավիճակը, անմիջական և հրատապ կարիքները, տարիքը, սեռը, հաշմանդամությունը, եթե այն առկա է, ինչպես նաև հասունության աստիճանը:

Անչափահասի մասնավոր/անձնական կյանքին միջամտությունը պետք է հասցվի նվազագույնի և այն պետք է տեղի ունենա միայն օրենքով սահմանված կարգով՝ նպատակ ունենալով ապահովել ապացուցների ներկայացվող բարձր չափորոշիչները, ինչպես նաև վարույթի ընթացքում արդարությունը և իրավահավասարությունը:

Անչափահաս տուժողի կամ վկայի գաղտնիությունը պետք է պաշտպանվի: Այն տեղեկությունները, որոնք կարող են բացահայտել որպես վկա կամ տուժող հանդիսացող անչափահասին, չպետք է հրապարակվեն առանց դատարանի թույլտվության:

Անչափահաս տուժողը կամ վկան պետք է իրավունք ունենան արտահայտելու իրենց տեսակետները, կարծիքներն ու համոզմունքներն իրենց իսկ խոսքերով, այդ թվում՝ նաև ազդելու վարույթի ընթացքը կանխորոշող որոշումների վրա:

Ի տարբերություն ներպետական օրենսդրության՝ սույն դասի ընթացքում քննարկվող միջազգային փաստաթղթերում ներմուծվել է անչափահասների վարույթին մասնակից նոր սուբյեկտ, այսպես կոչված, աջակցող անձ [3, 1-ին գլուխ]: Նա պետք է անցած լինի հատուկ վերապատրաստում և վարույթի ամբողջ ընթացքում ապահովի անչափահասի աջակցությունը:

Ներպետական օրենսդրությունում աջակցող անձի գործառույթներն, ըստ էության, տարաբաշխված են անչափահասի օրինական ներկայացուցչի, վերջինիս ներկայացուցչի (առկայության դեպքում), ինչպես նաև պաշտպանի, երբեմն նաև մանկավարժի մեջ:

Այս մասին առավել մանրամասնտես Դաս 7-ում:

Անչափահաս տուժողների և վկաների պաշտպանությունը վերը նշված փաստաթղթերում հանգում է հետևյալին՝ վերջիններիս և մեղադրյալի անմիջական շփումից զերծ մնալու, մեղադրյալի նկատմամբ մինչդատական կալանքի, տնային կալանքի կիրառման, անչափահասների պաշտպանության միջոցներ տրամադրելու (ոստիկանության կամ համապատասխան այլ մարմինների միջոցով), վերջիններիս գտնվելու վայրը թաքցնելու միջոցներին (Ուղենիշների 32-34-րդ կետեր):

Նպատակահարմար է նաև ուշադրություն դարձնել որոշակի տեխնիկական հարցերին (առանձնացված սենյակ վկաների համար, վարույթային գործողություններին մասնակցության առաջնահերթություն, դահլիճի կահավորանք, պրոցեսուալ ձևականության և մասնագիտական եզրաբանության հնարավորինս սակավ առկայություն):

Այս մասին առավել մանրամասնտես Դաս 7-ում:

ՄԻԵԴ-ն իր նախադեպային իրավունքով հնարավոր է համարել որոշակի դատավարական ձևականություն չպահպանելը՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ հանցագործություններից տուժել են երեխաներ:

Դատարանը Ա.Մ.-ն ընդդեմ Իտալիայի գործով [4] գտել էր, որ տեղի է ունեցել 6-րդ հոդվածի 1-ին մասի խախտում համատեղ 6-րդ հոդվածի 3-րդ մասի (դ) կետի հետ, քանի որ Իտալիայի ներպետական դատարանը հիմնվել էր միայն այն հայտարարությունների վրա, որոնք կատարվել էին ԱՄՆ-ում

դատավարության ընթացքում, և դիմումատուն դատավարության ոչ մի փուլում վկայի ներկայությամբ չէր կարողացել դրանց հակափաստարկ ներկայացնել: Սակայն այն դեպքերում, երբ մեղադրյալի պաշտպանը կարողացել է անգամ միջնորդավորված կերպով հարցեր հղելու տուժողին, ապա այդ դեպքում դատարանը գտել է, որ արդար դատաքննության իրավունքը չի խախտվել [4]:

ՄԻԵԴ-ը հնարավոր է համարում տուժող երեխայի հարցաքննության կատարումը գրավոր եղանակով՝ հոգեբանի ներկայությամբ, առանց մեղադրյալի կամ նրա պաշտպանի ներկայության, կամ այնպիսի սենյակում, որը պաշտպանության կողմին հնարավորություն կտա ներկա լինել դատավարությանը անուղղակի կերպով, օրինակի համար միակողմանի հայելու միջոցով կամ տեսանկարահանման միջոցով [5, 6]:

Ինչպես տեսնում ենք, երեխայի լավագույն շահը հաշվի պետք է առնվի վարույթի բոլոր փուլերում՝ վարույթային ձևական պահանջները հաղթահարելու հնարավորությամբ, սակայն բովանդակային կանոնները պահպանելու երաշխիքների չնսեմացմամբ:

Այսպիսով, պետք է փաստել, որ թեպետ անչափահաս տուժողների և վկաների պաշտպանության վերաբերյալ ՀՀ օրենսդրությունը առանձին գլուխ չի պարունակում, սակայն առկա են որոշակի իրավական դրույթներ, որոնք հնարավորություն տալիս են վարույթն իրականացնող մարմնին, հաշվի առնելով միջազգային լավագույն փորձը, պոզիտիվ իմաստով տարբերակված մոտեցում ցուցաբերել անչափահաս տուժողների և վկաների մասնակցությամբ կատարվող քննչական և դատավարական գործողություններին:

ԲԱՌԱՐԱՆ

Քրեական դատավարությանը մասնակցող անձ - ՔԴՕ 6-րդ հոդվածի 32-րդ կետի համաձայն՝ քրեական դատավարությանը մասնակցող անձինք են դատավարության մասնակիցները, ընթերցական, դատական նիստի քարտուղարը, թարգմանիչը, մասնագետը, փորձագետը, վկան: Իսկ 31-րդ կետի համաձայն՝ դատավարության մասնակիցներ են՝ դատախազը (մեղադրողը), քննիչը, հետաքննության մարմինը, ինչպես նաև տուժողը, քաղաքացիական հայցվորը, նրանց օրինական ներկայացուցիչները և ներկայացուցիչները, կասկածյալը, մեղադրյալը, նրանց օրինական ներկայացուցիչները, պաշտպանը, քաղաքացիական պատասխանողը և նրա ներկայացուցիչը:

Խտրականության արգելքի սկզբունք – ՄԱԿ-ի թմրամիջոցների և հանցագործությունների գրասենյակի կողմից ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի և Երեխաների իրավունքների միջազգային բյուրոյի հետ համատեղ մշակված և 2009 թվականին շրջանառության մեջ դրված «Հանցագործությունից տուժած և հանցագործության վկա երեխայի մասնակցությամբ արդարադատության վերաբերյալ» մոդելային օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր երեխա արդարացի և հավասար վերաբերմունքի իրավունք ունի՝ անկախ իր, իր ծնողի կամ օրինական ներկայացուցչի ռասայից, ծագումից, մաշկի գույնից, սեռից, լեզվից, կրոնից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային, էթնիկ կամ



Ցուցումներ

Ուշադրությամբ ծանոթացեք տերմիններին, իսկ դասի տեքստի յուրացման հետ կապված դժվարությունների դեպքում կրկին անդրադարձեք դրանց:



Մինչև 25 րոպե

սոցիալական ծագումից, գույքային դրությունից, հաշմանդամությունից, ծննդյան կամ այլ կարգավիճակից:

Աջակցող անձ - ՄԱԿ-ի թմրամիջոցների և հանցագործությունների գրասենյակի կողմից ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի և Երեխաների իրավունքների միջազգային բյուրոյի հետ համատեղ մշակված և 2009 թվականին շրջանառության մեջ դրված «Հանցագործությունից տուժած և հանցագործության վկա երեխայի մասնակցությամբ արդարադատության վերաբերյալ» մոդելային օրենքի 1-ին գլխում նշված հասկացությունների համաձայն՝ հատուկ վերապատրաստում անցած անձ, ով կոչված է աջակցելու երեխային վարույթի ողջ ընթացքում՝ հարկադրանքի, ռեվիկտիմիզացիայի և կրկնակի ռեվիկտիմիզացիայի ռիսկը կանխելու նպատակով:

Մերձավոր ազգականներ - ՀՀ ՔԴՕ 6-րդ հոդվածի 40-րդ կետի համաձայն՝ ծնողները, զավակները, որդեգրողները, որդեգրվածները, հարազատ և ոչ հարազատ (համահայր կամ համամայր) եղբայրները և քույրերը, պապը, տատը, թոռները, ինչպես նաև ամուսինը և ամուսնու ծնողները, վերջիններիս համար՝ փեսան և հարսը:

Մերձավոր – ՀՀ ՔԴՕ 98-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ՔԴՕ 12-րդ գլխում (Քրեական դատավարությանը մասնակցող անձանց պաշտպանությունը) «մերձավոր» է համարվում այն անձը, որի պաշտպանության նպատակով քրեական դատավարությանը մասնակցող անձը գրավոր դիմում է ներկայացրել քրեական վարույթն իրականացնող մարմին:

Երեխայի լավագույն շահ – Երեխայի իրավունքների երաշխավորման սկզբունք, որի առանցքում նրա բարեկեցության ապահովումն է՝ նպատակ հետապնդելով առավելագույնս երաշխավորել երեխայի անվտանգությունը, ինչպես նաև նրա առաջնահերթ կարիքների բավարարումն ու խնամքը: Երեխայի լավագույն շահը որոշվում է յուրաքանչյուր կոնկրետ դեպքով, հաշվի առնելով այնպիսի գործոններ, ինչպիսիք են՝ երեխայի տարիքը, նրա հասունության մակարդակը, մտավոր և ֆիզիկական կարիքները, այդ կարիքների բավարարման համար համապատասխան խնամքի հնարավորությունը, ծնողների ներկայությունը կամ բացակայությունը, նրանց հետ հուզական կապը, երեխայի զարգացման համար ծնողի/ների, ընտանիքի անդամների հետ անվտանգ պայմաններում շփվելու կարևորությունը, երեխայի սոցիալական շփումը (դպրոց, ընկերներ, մասնակցություն մշակութային կյանքին, սոցիալ մշակութային խմբակներին և այլն), ինչպես նաև երեխայի մշակութային, լեզվական, հոգևոր, կրոնական կապերը: